ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԵՐԵՎԱՆԻ Վ.ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.173 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ » ՊՈԱԿ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Երևանի հ.46 ավագ դպրոցի» ՊՈԱԿ-ի պատմության ուսուցիչ՝
Հերիքնազ Գերասիմի Ղուկասյան

«Սովորողների մեջարժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում »

հետազոտական աշխատանք

Երևան 2022թ

Բովանդակություն

1.Ներածություն---------- 3
2.Գլուխ 1 ---------- 4-7
3.Գլուխ 2---------- 7-13
4.Եզրակացություն ---------- 14-15
5. Օգտագործված գրականության ցանկ ---------- 16

Ներածություն

Հայոց պատմության բովանդակությունը բացառիկ է ինչպես ազգային,այնպես էլ համաշխարհային պատմության համատեքստում: Ապրելով տարբեր իրականությունների, կայսրությունների ու մշակույթների հաղորդակցության սահմանում՝ հայ ժողովրդի պատմությունն ունեցել է քաղաքակրթական վերելքներով ու դրամատիզմով լի ընթացք:

Առհասարակ ինչու է պետք դպրոցում պատմություն ուսումնասիրել:

Պատմություն առարկայի ուսումնասիրելու հիմնանպատակը ազգային ինքնության պահպանման ու զարգացման կարևորությունն է: Իմաստավորելով պատմական անցյալը, ընդառաջ ենք գնում մերօրյա զարգացումներին՝ պատրաստ լինելով հաղթահարել ցանկացած խոչընդոտ, դրանով նախադրյալներ ստեղծելով ապագայում սպասվող զարգացումներին նախապատրաստվելու համար:

Կարելի է ուսումնասիրել զարգացած երկրների տասնյակ ուսումնական ռազմավարություններ, բայց արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է դրանք խնամքով հարմարեցնել հայաստանյան կրթական միջավայրին ու պատմության ուսուցման բովանդակությանը:

Փորձը ցույց է տալիս ,որ սովորողների հիշողության մեջ պատմական փաստերն առավել ամրապնդվում են, եթե դրանք ստացվում են վերլուծություն կատարելու ընթացքում ,այլ ոչ թե սոսկ անգիր անելու միջոցով:

Պատմության ուսուցումն առավել արդյունավետ է դառնում ակտիվ ուսուցման շնորհիվ:

Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում է: Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ:Իհարկե, ակտիվ մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռքբերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով:Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը, դասախոսությունը:

Գլուխ 1

Ինչպե՞ս զարգացնել պատմական ակտիվ մտածողություն

«Պատմություն» բառն ունի առնվազն երեք իմաստ: Իմաստներից մեկը «անցյալն» է: Մյուս իմաստն է «գիտելիք անցյալի մասին» , իսկ երրորդ իմաստը վերաբերում է գիտելիք կառուցելու առանձին գործընթացին. դա այն աշխատանքն է, որ իրականացնում է պատմաբանն անցյալի մասին գիտելիք ստեղծելու նպատակով: Շատ կարևոր է, որ պատմության դասերի արդյունքում սովորողներն անցյալի մասին գիտելիքներ ձեռք բերեն: Եթե սովորողները չիմանան և չհասկանան ժամանակագրության առանցքային հատվածները, ապա դժվար կլինի ասել, թե նրանք պատմություն գիտեն:Այնուամենայնիվ,«անցյալի մասին գիտելիքը»՝ որպես ուսումնառության վերջնարդյունք, մեզ չի կարող բավարարել երկու պատճառով: Նախ՝ հնարավոր չէ պնդել, թե ինչպես է ստեղծվում պատմական գիտելիքը: Նույն տրամաբանությամբ հնարավոր չէ պնդել, թե պատմություն «գիտես» , եթե չգիտես, թե ինչպես է ստեղծվում պատմական գիտելիքը:[1]



Խիստ կարևոր է, որ ուսուցիչները օգնեն սովորողներին քննել պատմությունը և բանավիճել դրա շուրջ, ըմբռնել պատմական կարևոր հասկացությունները:

Հարցերին պատասխանելու ակտիվ մտածողական գործընթացը կարող է տարբեր ձևաչափեր ունենալ: Օրինակ՝ կարելի է մոդելավորել պատմական որևէ իրադարձություն՝ կարևոր դերակատարների միջև եղած հարաբերություններն ու

[1] <<Գիրք պատմության ուսուցման Ինչու՞ Ինչպե՞ս>> Պարադիգմա կրթական հիմնադրամ էջ 15

ժամանակի ընթացքում դրանց զարգացումը ցույց տվող դիագրամ ստեղծելով: Դասագրքից կամ տարբեր աղբյուրներից ստացված տեղեկության հետ այսպիսի աշխատանքը կենսական նշանակություն ունի անհրաժեշտ ընկալում և գիտելիք ձևավորելու համար:

1. Անցյալի մասին հարցեր տալ
2. Անցյալի մասին տեղեկությունը սովորել և հիշել
3. Անցյալի մասին տեղեկությունը ընկալել,մոդելավորել և հասկանալ
4. Անցյալի մասին հարցեիրն պատասխանել

Պատմությունը գիտելիք է կառուցում՝ քննելով անցյալի «մնցորդները»՝ արխիվային փաստաթղթերը, հնավայրերը, թանգարանային արտեֆակները, ընտանեկան հուշերը:Իրադարձությունների զարգացման հիմնական ժամանակագրությունը պարզելուց հետո բազմաթիվ հարցեր են առաջանում: Հարցեր իրադարձությունների **պատճառների**, ժամանակի ընթացքում տեղի ունեցած **փոփոխությունների**, պատմական դերակատարների և զարգացումների **կարևորության** մասին:[2]

Վերոնշյալ ընկալումները սովորողների մոտ զարգացնելու համար անհրաժեշտ է դասարանում հաճախ օգտվել պատմական աղբյուրներից և խրախուսել ամենատարբեր փորձարկումները դրանց հետ: Որպեսզի սովորողները պատմական մտածողություն ձևավորեն և ոչ թե միայն որոշ հատվածները յուրացնեն, պետք է խրախուսել նրանց ամբողջական պատմական մտածողություն կիրառել: Եթե իսկապես ցանկանում ենք սովորողների մտածողությունը զարգացնել, ապա պետք է ուսումնառության այնպիսի փորձություններ ստեղծենք, որ նրանք մտածեն սեփական մտածողության մասին: Սա կօգնի նրանց խորացնել ուսումնասիրվող նյութի և այն ուսումասիրելու համար կիրառվող գործիքների ընկալումը: Սովորողներին պետք է նաև խթանել, որ համադրեն պատմական մտածողության տարբեր բաղադրիչները: Սովորողների պատմական մտածողությունը կզարգանա, եթե նրանց հանձնարարենք մտածել պատմության մասին՝ որպես իմացության ձևի, ինչպես նաև դրա սահմանների և ներուժի մասին:

Ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել աշակերտի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը: Բայց կարևոր է նաև նշել, որ ակտիվ մեթոդների մեծամասնությունը բազմաֆունկցիոնալ նշանակություն ունենա ուսուցման գործընթացում:Օրինակ, կոնկրետ իրավիճակների վերլուծությունը կարող է ունենալ ուսուցման երեք նպատակ.

[2] <<Գիրք պատմության ուսուցման Ինչու՞ Ինչպե՞ս>> Պարադիգմա կրթական հիմնադրամ էջ 18

1. Համախմբել դասի ընթացքում ձեռքբերված նոր գիտելիքները:

2. Կատարելագործել արդեն ձեռքբերած մասնագիտական հմտությունները:

3. Ակտիվ ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել այնպիսի մեթոդների համակարգ, որոնց ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ աշակերտի կողմից գիտելիքի ինքնուրույն ձեռքբերում՝ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում:

Մարդը շրջապատող միջավայրը ընկալում է իր 5 զգայարաններով:Սակայն տեղեկատվության ընկալման գլխավոր դերը կատարում են աչքերը:Մարդու կարողությունները չափազանց սահմանափակվում են այդ զգայարանի բացակայության դեպքում:Այդ պատճառով էլ ուսումնական գործընթացներում կարևոր տեղ է հատկացվում տեսողականացմանը: Տեղեկատվությունը և ուսումնական բովանդակությունը միշտ պետք է ներկայացվեն ընկալման տեսողական ծավալների հաշվառմամբ, աչքերին՝թողնելով առավել էական առարկաներն ու երևույթները: Տեսողականացման տակ մենք հասկանում ենք տեղեկատվության կամ ուսումնական բովանդակության պատկերազարդումը ակներև պատկերների միջոցով: Հետևաբար տեսողականացումը պատկերազարդման մեթոդ է, ինչպես նաև միջոց: Պատկերազարդման այլ հնարավորություններ են մոդելների ներկայացումը, գործընթացի ցուցադրումը, առարկաների գործածումը: Ուսուցման ակտիվ մեթոդների կիրառումը ուսուցման գործընթացի արդյունավետությունը և արդյունքները պայմանավորված են նրանով, որ մեթոդների ստեղծումը հիմնվում է լուրջ հոգեբանական և մեթոդաբանական գիտելիքի վրա: Ակտիվ մեթոդները ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից.

- Ուսումնական դրական խթանի ձևավորում,
- Աշակերտների ճանաչողական ակտիվության բարձրացում.
- Կրթական գործընթացին աշակերտների ակտիվ ներգրավում.
- Ինքնագործունեության խթանում,
- Ճանաչողական գործընթացների զարգացում - խոսք, հիշողություն, մտածողություն
- Ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացում,
- Ստեղծագործական մտածելակերպի զարգացում,
- Աշակերտների անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացում,
- Աշակերտների անհատական-յուրահատուկ հնարավորությունների բացահայտում և զարգացում,

- Ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում:[3]

Ակտիվ ուսուցումը ուսուցիչների և աշակերտների միջև փոխգործակցություն է, որտեղ ուսուցիչները և աշակերտները շփվում են միմյանց հետ դասի ժամանակ, և սովորողները այլևս պասիվ ունկնդիրներ չեն, այլ դասի ակտիվ մասնակիցներ:Եթե պասիվ մեթոդի ժամանակ դասի հիմնական գործող անձը ուսուցիչն էր, ապա այստեղ ուսուցիչ-աշակերտ փոխազդեցությունը հավասար մակարդակի վրա են՝ սուբյեկտ սուբյեկտային փոխհարաբերություններ:

Գլուխ 2

Ոչ ստանդարտ ուսուցման մեթոդներ

Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը: Երբ արտաքին աշխարհից տեղեկատվություն ենք ստանում, այն սկզբում առնչվում է մեր կարճաժամկետ կամ աշխատանքային հիշողությանը: Որպեսզի կարողանանք արտաքին աշխարհից տեղեկություն ստանալ, մեզ պետք է ուշադրության կենտրոնացում: Ուշադրությունը կարևոր է ոչ միայն ուսուցման համար, այլև այսօր համարվում է մարդու կյանքի կարևորագույն ռեսուրսը: Աշակերտներին բավականաչափ զբաղեցնում են նաև սոցիալական ցանցերը: Մի խոսքով՝սովորելու ժամանակ շատ քիչ է մնում: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը: Երեխաները սիրում են զարմանալ: Անսպասելի, զարմանալի մտքերը գրավում են նրանց ուշադրությունը:[4]

Այսպիսով՝սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլը **ուշադրության կենտրոնացումն է:** Երբ աշակերտը կենտրոնացնում է ուշադրությունը, ուսուցանվող նյութը տեղափոխվում է աշխատանքային կամկարճաժամկետ հիշողության մեջ: Ոչ ստանդարտ ուսուցման մոտեցումներից են.

Մտաբերում

Վերջին տարիներին բազմաթիվ մասնագետներ նշում են, որ մտաբերումը ուսուցման առավել արդյունավետ ձևերից է: Մտաբերումը մտապահված գիտելիքի ակտիվացումն է, իմացածը դուրս բերելը: Հետաքրքիր է, որ «կրթություն» բառի լատիներեն «Education» համարժեք բառի արմատը՝ «Educe», թարգմանաբար

[3] Սերոբ Խաչատրյան <<Ուսուցման արդյունավետ հնարներ>>
[4] Սերոբ Խաչատրյան <<Ուսուցման արդյունավետ հնարներ>> էջ 24

նշանակում է «դուրս բերել»: Ուսուցման գործընթացում մենք հաճախ ավելի կարևորում ենք համարում գիտելիք տալը: Բայց պարզվում է, որ սովորելու չափանիշը իմացածը դուրս բերելն է, որ հայերեն կարող ենք կոչել մտաբերում:[5]

Նյութի սփռում ժամանակի մեջ

Կարճ ժամանակում սովորածը շատ ավելի արագ է մոռացվում,քան երկար ժամանակ սովորածը: Հետևաբար՝շատ ավելի արդյունավետ է քննություններին պատրաստվել ոչ թե վերջին մեկ-երկու օրվա ընթացքում, այլ ավելի տևական ժամանակում: Իսկ կարևոր թեմաները ոչ թե պետք է ուսուցանել մեկ դասի ընթացքում և առաջ անցնել, այլ պետք է դրանց անընդհատ անդրադառնալ:

Խառը ուսուցում

Խառը ուսուցումը կապված է ժամանակի մեջ նյութի սփռման հետ: Հետազոտությունները ցույց են տվել, որ ուսուցումն առավել արդյունավետ է, երբ ուսումնական նյութը մատուցվում է խառը:

Մանրամասնում

Ուսուցման արդյունավետ գործիքներից մեկը մանրամասնումն է: Դասավանդողների մոտ սովորաբար առկա է մի երևույթ, որը կոչվում է «գիտելիքի անեծք»:[6] Գիտելիքի անեծքը պայմանավորված է այն հանգամանքով, որ գիտելիք ունեցող ուսուցիչը սովորեցնում է դեռևս գիտելիք չունեցող աշակերտին, այլ կերպ ասած՝ուսուցման գործընթացում առկա է որոշակի ասիմետրիա: Խնդիրն այն է, որ գիտելիք ունեցողը հաճախ չի պատկերացնում, թե ինչ է տեղի ունենում դեռևս չիմացող աշակերտի հետ: Ի՞նչ է հասկանում, ի՞նչ չի հասկանում, ի՞նչն է դժվարությամբ տրվում: Պատահական չէ, որ հաճախ ուսուցիչները զարմանում են, թե ինչու աշակերտները հասարակ բաները չեն հասկանում: Իրականում այդ ամենը հասարակ է թվում իմացողի տեսանկյունից: Իսկ դեռևս չիմացողի տեսանկյունից կարող է այլ կերպ լինել: Հետևաբար՝շատ կարևոր է աշակերտներին նոր բաներ սովորեցնելիս մանրամասնել և անդրադառնալ՝ինչո՞ւ է այդպես, ինչի՞ց է բխում այդ հետևությունը, որո՞նք են խնդրի բաղկացուցիչները և նմանատիպ այլ հարցերը: Շատ արդյունավետ հնար է **մանրամասնող հետադարձ կապը:**

Հաճախ հետադարձ կապ տալիս, ուսուցիչները միայն նշում են,թե ինչն է սխալ կամ ճիշտ,մինչդեռ կարևոր է մանրամասնել, թե ինչու է սխալ:

Օրինակներով ուսուցում

[5] Սերոբ Խաչատրյան <<Ուսուցման արդյունավետ հնարներ>> էջ 13
[6] Սերոբ Խաչատրյան <<Ուսուցման արդյունավետ հնարներ>> էջ 16

Ուսուցման գործընթացում ուսուցիչները հաճախ են օրինակներ օգտագործում, սակայն դրանց հետ կապված կարևոր է իմանալ երկու բան:Առաջին՝հաճախ ուսուցիչները բավարարվում են մեկ օրինակ բերելով:

Երկրորդ՝շատ կարևոր է, որ աշակերտներին առաջադրանքներ տալիս տրվեն այնպիսի օրինակներ, որոնցում հարցի պատասխանի մի մասը կա կամ ներառված են խնդրի լուծման որոշ քայլեր: Սա աշակերտներին քայլ առ քայլ սովորելու հնարավորություն է տալիս:

Պատկերի և տեքստի համադրում

Մենք ապրում ենք մի ժամանակում, երբ պատկերներ ստեղծելու հնարավորությունները մեծացել են: Արդյունքում մարդիկ ավելի լավ են յուրացնում այն ամենը, ինչը ուղեկցվում է պատկերներով: Դրանք կարող են լինել նկարներ, լուսանկարներ, գծագրեր, գծապատկերներ, ինֆոգրաֆիկաներ:

Հետևաբար՝արդյունավետ ուսուցման գործընթացում պարտադիր է **խոսքի և տեքստի ուղեկցումը նկարով;**

Մետաիմացություն

Ուսուցման գործընթացում շատ մեծ դեր ունի այն հանգամանքը, թե որքանով են աշակերտները տեղյակ իրենց իմացածից ու չիմացածից: Այս երևույթը կոչվում է մետաիմացություն:Այս դեպքում աշակերտը կարողանում է իրեն կողքից նայել և հասկանալ իր իմացածն ու չիմացածը: Ահա այն 3 հարցերը, որը պետք է տա յուրաքանչյուր սովորող:

1.Որտե՞ղ եմ ես

2.Որտե՞ղ պիտի լինեմ

3.Ինչպե՞ս հասնեմ այնտեղ, որտեղ պիտի լինեմ:[7]

Նոր նյութի բացատրության ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ աշակերտը միանգամից չի կարող շատ բան սովորել: Նոր նյութը բացատրելիս ուսուցիչը պետք է ուշադիր լինի, որպեսզի չգերազանցի այդ ծավալը: Ծավալը գերազանցելու դեպքում աշակերտի աշխատանքային հիշողությունը չի կարողանում հասկանալ նոր նյութը:Այդ առումով նոր նյութ բացատրելիս շատ կարևոր է այն փոքր կտորներով բացատրելը: 5-7 րոպե նյութը ներկայացնելուց հետո անհրաժեշտ է կանգ առնել, հարցերի միջոցով պարզել՝արդյո՞ք հասկանում են երեխաները նոր ներկայացված նյութը: Ապա ևս 5-7 րոպե ծախսել նոր նյութի մատուցման համար: Նոր նյութի մատուցման փուլում շատ կարևոր է նաև արդեն իմացածի հետ կապակցումը:

[7] Սերոբ Խաչատրյան <<Ուսուցման արդյունավետ հնարներ>> էջ 18

Մարդը սովորում է այն դեպքում, երբ կարողանում է նոր գիտելիքը կապակցել արդեն իմացածի հետ: Հետևաբար՝նոր նյութը պետք է անընդհատ կապակցել նախկին ումուսումնասիրված նյութի հետ:

Նոր նյութը բացատրելիս կարևորէ **«սատանայի վկա» հնարի** հաճախակի կիրառումը: Այս դեպքում ուսուցիչը միտումնավոր սխալ միտք է ասում, որպեսզի ստուգի, թե որքան ուշադիր է դասարանն իրեն լսում: Իհարկե, սխալը պետք է լինի աշակերտների արդեն իմացած նյութի շրջանակում: Հաճախ ուսուցիչներին թվում է, թե այդ դեպքում աշակերտները կարող են մտածել, որ իրենց ուսուցիչը չի տիրապետում նյութին և սխալ բաներ է ասում: Բայց մի քանի անգամ կիրառելուց հետո աշակերտները կհասկանան, որ դա մանկավարժական հնար է :«Սատանայի վկա» հնարի կիրառումը աշակերտների ուշադրությունը կենտրոնացնելու լավ մեթոդ է:[8]

Դասի զեկուցող-այս պարզագույն հնարը շատ կարևոր դեր կարող է ունենալ սովորողներին դասապրոցեսում ընդգրկելու գործում: Ուսուցիչն աշակերտներից մեկին նշանակում է դասի-զեկուցող: Վերջինս դասի ավարտից 3-5 րոպե առաջ ամբողջ դասարանին ամփոփ ներկայացնում է, թե ինչի մասին էր դասը, ինչ արեցին, ինչ կարևոր բաներ սովորեցին:

Ինձնից առաջ հարցրու երեք հոգու-այս հնարի իմաստն այն է, որ աշակերտները սովորեն նաև միմյանցից: Ուսուցիչն առաջարկում է աշակերտներին հարցերով դիմել իրենց դասընկերներին և իրեն դիմել միայն այն բանից հետո, երբ երեք աշակերտների դիմելուց հետո չեն ստացել հարցի պատասխանը:

Խորհրդավորություն--երեխաները սիրում են գաղտնիքներ: Գաղտնիքների առկայությունը մոտիվացնում է նրանց: Երեխաները ցանկանում են րոպե առաջ բացահայտել գաղտնիքը: Հետևաբար, երբեմն կարելի է դասը սկսել հետևյալ նախադասությամբ.

Ես մտքիս մեջ բան եմ պահել:Այն վերաբերվում է մեր ուսումնասիրած թեմաներից մեկին: Դուք պետք է ինձ հարցեր տաք: Ես հարցերին կարող եմ պատասխանել «այո» կամ «ոչ» տարբերակով:Դուք պետք է հարցերն այնպես ձևակերպեք ,որ «այո» կամ «ոչ» պատասխանը ձեզ օգնի հասկանալ,թե ինչ եմ պահել մտքիս :

Կերպարային քարտեր- այն հրաշալի միջոց է պատմական կարևոր իրադարձությունները «ներսից» տարբեր կերպարների դիտանկյունից ուսումնասիրելու համար: Քարտը ներկայացնում է տվյալ իրադարձության (ժամանակահատվածի) կերպարների մտադրությունները, հուզական վիճակները, տեսանկյունները:

[8] Սերոբ Խաչատրայն <<Ուսուցման արդյունավետ հնարներ>> էջ 31

Կերպարային քարտը կարող եք կիրառել պատմական ակտիվ մտածողություն խթանող տարատեսակ հարցադրումների քննարկման համար:[9]

Պատմական առեղծվածի բացահայտում- այս ռազմավարությունը խթանում է դեդուկտիվ մտածողությունը, սովորողները սկսում են ավելի ուշադիր լինել պատմական իրադարձությունների պատճառահետևանքային կապերին: Սովորողներին պետք է տալ որևէ ժամանակաշրջանում գործող խուզարկուի դեր: Նրանք պետք է ինքնուրույն կամ խմբով «բացահայտեն» պատմության որևէ առեղծվածային իրադարձության հանգամանքները:

Օրինակ՝ բացահայտեք Պապ թագավորի սպանությունը 374 թվականին:
Տրվում է օգնող հարցեր՝

1/ Որտե՞ղ սպանվեց Պապը:

2/Որտեղի՞ց էր եկել Պապն այն քաղաք,ուր նրան սպանեցին

3/ Ինչո՞ւ սպանեցին հենց այդ վայրում:

4/Շահագրգիռ ի՞նչ կողմեր կային Պապ թագավորի սպանության

5/ Գտեք կասկածյալներին:

6/ Ինչո՞ւ սպանեցին Պապ թագավորին:



Պատմական աղբյուրները՝

Պապ թագավորի սպանությունը՝ ըստ Փավստոս Բուզանդի (Հովհաննիսյան և Մովսիսյան 2011,էջեր114-115)

Պապ թագավորի սպանությունը՝ ըստ ք.հ 4-րդ դարի հռոմեացի պատմիչ Ամմիանոս Մարկելինոսի (Հովհաննիսյան և Մովսիսյան 2011,էջեր113)

Յուրաքանչյուրը իր «բացահայտումը» ներկայացնում և հաջորդական փակցնում է պաստառին:

Պատկերի ակնթարթային դիտում- պատմական լուսանկարների, կտավների կամ այլ պատկերապատումների հետ սոսկ ծանոթությունը կարող է սովորողների համար ձանձրալի լինել: Մինչդեռ այդպիսի աղբյուրները վերլուծական հարուստ տեղեկություններ են պարունակում: Որևէ աղբյուր ցուցադրելու փոխարեն, ուսուցիչը կարող է քննարկումը սկսել դատարկ էկրանով: Պետք է սովորողներին տեղեկացնել, որ 5 վայրկյանով պատկեր է ցուցադրվելու, որից հետո էկրանն անջատվելու է, որպեսզի նրանք քննարկեն, թե ինչ են մտապահել տվյալ պատկերի մասին: Այնուհետև երեխաներին պետք է տրվեն աջակցող հարցեր: Քննարկումներից հետո պետք է կրկին ցուցադրել նկարը՝ ավելի մանրամասն դիտելու և քննարկելու համար: Վերջում պետք է ամփոփել՝ հղում անելով սովորողների առաջ քաշած վարկածները:[10]

Մեծ է գծապատկերների դերը: Դրանք ավելի պատկերավոր են դարձնում բացատրությունները,կարելի է հանձնարարել սովորողներին,կամ ցուցադրել նյութը ներկայացնելու ժամանակ:

օրինակ.Պետության խնդիրները

Պետության տեսակները



[10] <<Գիրք պատմության ուսուցման Ինչու՞ Ինչպե՞ս>> Պարադիգմա կրթական հիմնադրամ էջ 69

Պատմական հուշարձանի նախագծում- սա հիանալի միջոց է պատմության մեկնաբանողական հմտություններ զարգացնելու համար: Կարևոր է, որ սովորողը մեկնաբանի, թե պատմական ինչ բովանդակություն և ուղերձներ է պարունակում հուշահամալիրի հետ կապված նրա յուրաքանչյուր որոշումն ու մտահաղացումը: Սովորողները կարող են կամ նոր հուշարձանի նախագծի շուրջ աշխատել, կամ վերստեղծել որևէ գործող հուշարձան: Վերջինը հատկապես արդյունավետ է այն դեպքում, երբ պետք է վերլուծել, թե ինչպես է ներկայացվում միևնույն պատմական նյութը տարբեր ժամանակներում և տարբեր դիտանկյուններից:

« Ինչպե՞ս պատմություն ուսուցանել «Կոշիկի» միջոցով» - դասավանդողը դասի ընթացքում դիտարկում է Արենիի քարանձավից գտնված հինավուրց կոշիկը, որի ,միջոցով պետք է պարզել՝ արդյոք Արենիի շրջանում ապրող մարդիկ նստակյա՞ց կենսագործունեություն են վարել, թե՞ քոչվորներ են եղել: Կարելի է կիրառել մի քանի հարցադրումն.

1. Ի՞նչ նյութերից է պատրաստված կոշիկը:
2. Հաշվի առնելով կոշիկի պատրաստման նյութերի տեսականին (կաշի, թելեր, մետաղյա կամ այլ նյութից պատրաստված ասեղ, որով կարվել է կոշիկը) ի՞նչ մասնագիտություններ կառանձնացնենք այդ ժամանակների համար:[11]

Նմանատիպ հարցերը կարելի է շարունակել, ու մտագրոհի, քննարկումների միջոցով սովորողները կբացահայտեն, որ հազարավոր տարիներ առաջ Արենիի շրջակայքում ապրել են կաշեգործներ և անասնապահներ, որոնք մատակարարել են այդ կաշին, թել մանողներ և այդ թելի համար հումք ապահովող այլ մասնագիտությունների տեր մարդիկ ու վերջապես կոշկակարներ: Դասավանդողը կարող է դասի ընթացքում ցուցադրել կոշիկի, Արենիի քարանձավի պատկերները և քննարկումը տանել դրանց միջոցով:

Վերոնշյալ բոլոր մեթոդները կիրառելու համար շատ կարևոր է, որ դասավանդողները ուսումնական ակտիվ մեթոդները կիրառեն ժամանակի արդյունավետ կառավարմամբ, քանի որ յուրաքանչյուր դասարան կամ սովորող կարող է անհատական մոտեցում պահանջել: Ինչպես նաև շատ կարևոր է, որ այս մեթոդները օգտագործելիս դասավանդողները լինեն համբերատար: Հարցադրումները հնչեցնելուց հետո սովորողներին տալ դադարի ժամանակ, հանդուրժողաբար լսել նրանց՝ թողնելով արտահայտել սեփական կարծիքը:

[11] <<Գիրք պատմության ուսուցման Ինչու՞ Ինչպե՞ս>> Պարադիգմա կրթական հիմնադրամ էջ 11

Եզրակացություն

Ցանկացած սոցիալական գործընթաց մարդկանց փոխազդեցություն է: Մասնավորապես՝ուսուցումը նպատակաուղղված և հատուկ կերպով կազմակերպված փոխազդեցությունէ:Սակայն ուսուցման գործընթացի բնույթը պայմանավորվում է այդ փոխազդեցության կառուցվածքով, ձևերով ու բովանդակությամբ:Դաս-դասարանային համակարգի ուսուցման գործընթացի կառուցվածքային հիմքում դրված է փոխազդեցության ուսուցիչ-աշակերտական խումբ ձևը: Սա է պատճառը, որ ուսումնական պարապմունքները կազմակերպվում են ընդհանուր ճակատով, այսինքն՝աշխատանքի յուրաքանչյուր պահին բոլոր աշակերտները զբաղված են միևնույն խնդրով, աշխատում են միևնույն ձևով, տվյալ խնդրի կատարման համար բոլորին հատկացվում է միևնույն ժամաքանակը: Նման տեսակի ուսումնական պարապմունքները մենք անվանում ենք խմբային: Խմբային պարապմունքների բավական լուրջ պրոբլեմներից մեկ այնէ, որ ուսումնական խմբի անդամների մեծ մասը պասիվ լսողի դերում է հայտնվում: Սրա հաղթահարման ուղիներից մեկն աշակերտների միջև արդյունավետ փոխազդեցության կազմակերպումն է, ինչն էլ հենց հանդիսանում է ինտերակտիվ մեթոդի հիմնական գաղափարը: Սակայն խմբային ուսուցման պայմաններում աշակերտների միջև փոխազդեցություն կազմակերպելու հնարավորությունները սահմանափակ են: Այստեղ հիմնականում օգտագործվում են ենթախմբային կամ համախմբային քննարկումների տարբեր հնարքներ ու մեթոդներ, որոնք բավական արդյունավետ են կարծիքների ձևավորման, փոխանակման, ընդհանուր մոտեցումների մշակման համար: Եթե երեխայի գործունեության առաջնային և ցանկալի ձևը համարվում է խաղը, ապա ուսուցման կազմակերպման համար պետք է օգտագործեն գործունեության այս ձևը՝համատեղելով խաղը և ուսումնական գործընթացը, ավելի ճիշտ, օգտագործել խաղային գործունեությունը կրթական նպատակներին հասնելու համար: Այս դեպքում խաղի մոտիվացիոն ներուժը կուղղվի ուսումնական ծրագրի ավելի արդյունավետ իրագործմանը: Բարձր դրական մոտիվացիան կարող է լրացնող գործոն հանդիսանալ սովորողների ոչ բավարար բարձր ունակությունների ժամանակ, բայց հակառակ ուղղությամբ այդ սկզբունքը չի աշխատում՝ոչ մի կարողություն չի կարող փոխհատուցել մոտիվացի բացակայությունը, և ապահովել ուսուցման էական առաջընթաց:

Բնական խաղային միջավայրում, որտեղ չկա պարտադրանք, և կա հնարավորություն յուրաքանչյուր երեխայի համար գտնել իր տեղը, ունենալ նախաձեռնություն և անկախություն, ազատ իրականացնելու իրենց կարողությունները և կրթական կարիքները, հանդիսանում է ուսումնական նպատակներին հասնելու

օպտիմալ տարբերակ: Եվ կրթական գործընթացում ուսուցման ակտիվ մեթոդների ներառումը թույլ է տալիս ստեղծել այդպիսի միջավայր, ինչպես դասարանում, այնպես էլ արտադպրոցական միջոցառումների ժամանակ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Սերոբ Խաչատրյան <<Ուսուցման արդյունավետ հնարներ>>

2. <<Գիրք պատմության ուսուցման Ինչու՞ Ինչպե՞ս>> Պարադիգմա կրթական հիմնադրամ